«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հասարակագիտություն առարկայի կարևորությունը մասնագիտության ընտրության հարցում
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Արփինե Հովհաննիսյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի Խ.Աբովյանի անվան թիվ 1 ա/դ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տրակտատ 1

Ներածություն -Առարկայի կարևորությունը և կենսականությունը, նպատակն ու խնդիրները 2

Տրակտատ 2

Բովանդակություն - Մասնագիտության ընտրությունը. Դպրոց - բուհ <<Փայտամածիկներ>> 4

Տրակտատ 3

Եզրակացություն, առաջարկություններ - << Դպրոցաֆոբիա-Բուհաֆոբիա>>.....14

Գրականության ցանկ.....18

Ներածություն

Ժողովրդավարական – սոցիալական ուսուցման հիմնական նպատակը սովորողների մոտ անձնական ազատության, քաղաքացիական պատասխանատվության և օրինականության հարցերի նկատմամբ սեփական դիրքորոշում ձևավորելն է: Սովորողը բախվում է ժամանակակից հասարակության խնդիրներին (դրանք անմասն չեն իրենից, որովհետև ինքը սոցիումի անդամ է), հասարակական-քաղաքական ամենատարբեր հարցերին և հնարավորություն ունենա կիրառել ձեռք բերած գիտելիքները: Հասարակագիտություն առարկայի կարևորությունը կայանում է բազմաձև բանաձևի մեջ:

Գիտելիք → կրթություն → մասնագիտություն → կիրառություն → կենսափորձ

Առարկան նաև նպաստում է սովորողի ակտիվ գործունեության զարգացմանը: Հնարավորություն է ընձեռում ընդհանուր գաղափարի շուրջ համախմբվելու, հասարակական աշխատանքներ կատարելու, իրավիճակներ գնահատելու, վիճելի, երկվական հարցերի առնչությամբ որոշումներ ընդունելու և, այդ որոշումները պաշտպանելու հմտություններ, և ի վերջո այս ամենի արդյունքում նոր արժեքներ որդեգրելու, որոնք դառնում են վարքագիծ, հետևաբար մասնագիտություն(ներ) ընտրելու և իր անձը կարևորելու մեջ՝ որպես սոցիումի անդամ: Արժեքներից կարևորվում են

1. *Ծնողների վերաբերմունքը*. Իմաստուն որդին իր հոր ուրախությունն է, իսկ հիմար որդին՝ մոր դժբախտությունը:
2. *Կշռադատվածություն և աշխատասիրություն*. Ամռանը պտուղները քաղողը՝ խելամիտ որդին է, իսկ տապին քնածը՝ անխոհեմ որդին:
3. *Լսելու ունակություն.* Սրտով իմաստունը լսում է պատվիրանները, խրատները, իսկ հիմար շատախոսին՝ կործանումը:

4. *Բառեր և բառակապակցություններ.* արդարի բերանը կյանքի աղբյուրն է, իսկ ամբարիշտի բերանը՝ բռնություն է թաքցնում: Իմաստունները փրկում են գիտելիքները:
5. *Վերաբերմունքը օրենքին.* Անմիտների զվարճանքը սխալ գործելն է, իսկ իմաստնությունը՝ խոհեմի ուրախությունը:

Արդյունքում ի՞նչ

Ինչը վախեցնում է ամբարիշտներին, դա էլ կհասնի նրանց, իսկ արդարների ցանկությունները կկատարվեն: Փոթորիկը վրա է հասնում, և ոչ մի ամբարիշտ չկա, իսկ արդարները հավիտյան կանգուն են:
Այս բազմազան խմբի բոլոր անդամների համար տարաբնույթ գաղափարների, տեսակետների և լուծումների աղբյուր է հանդիսանում: Ուսուցիչը կարող է սկզբից ևեթ հարստացնել այդ բազմազանությունը, և պե՛տք է հարստացնի՝ առավելագույնի հասցնելով սովորողներից յուրաքանչյուրի նախասիրությունը: Այս ճանապարհով մոտեցումները կդառնան անհատական, սովորողի համար վաղվա ճիշտ մասնագիտության ընտրության հարցում, որովհետև ինքն արդեն կսկսի դասդասել մասնագիտության ոչ թե դրական և բացասական կողմերը, այլ՝ առավելություններն ու դժվարությունները:Արժեքները ամբարած, դպրոցում ուսուցչի ստեղծած բազմազանությունը, պատկերավոր ասած, ոսկու հանք է: Այն բազմազան խմբի բոլոր անդամների համար տարաբնույթ գաղափարների, տեսակետների և լուծումների աղբյուր է հանդիսանում:

Մասնագիտության ընտրությունը. Դպրոց - բուհ <<Փայտամածիկներ>>

Մասնագիտության ընտրությունը կախված է ընտանիքի (որը սոցիումի բջիջն է) դերից, որը պետք է երեխայի համար լինի հոգեկան հավասարակշռության, պաշտպանվածության և ապահով զգացողության օրրան: Ծնողը պետք է ազատված լինի <<ֆոբիաներից՝ դպրոցաֆոբիայից, բուհաֆոբիայից>> . չէ՞ որ հյուսնի, շինարարի, հելունագործի, գորգագործի, բրուտագործի, ոսկերչի, լարախաղացի կարիք էլ ունենք: Եվ որպեսզի երեխան հաղթահարի իր տարիքին բնորոշ վախերը և ձեռք չբերի ծնողի կողմից փոխանցվող անվստահությունը, անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ ծնողների թաքնված, երբեմն չգիտակցված վախերը՝ գործի դնելով անավարտ դատողությունները.

* Եթե երեխան հանդիպում է **գովասանքի**, նա սովորում է **գնահատել,**

* Եթե երեխան հանդիպում է **ազնվության**, սովորում է **արդարություն,**

* Եթե երեխան հանդիպում է **ապահովության**, ապա սովորում է **ինքնավստահություն,**

* Եթե երեխան հանդիպում է **խրախուսանքի,** ապա սովորում է **վստահություն,**

* Եթե երեխան հանդիպում է **մտածողության- վերլուծության** , ապա նա սովորում է **ճիշտ ընտրություն կատարել…**

Տարիքային աճին զուգընթաց ձևավորվում է պատկերացումների առարկայացում. Նրանք սովորում են տարբերակել իրենց զգացմունքները, իրենց շրջապատող մարդկանց գործողությունները կանխատեսելու, ամոթի, հպարտության և ինքնասիրության զգացումների զարգացմանը զուգընթաց՝ բարդանում է վախերի հոգեբանական կառուցվածքը, որտեղ էլ օգնության է գալիս ոսկեդրամի մյուս կողմը: Երկրորդ ծնող կոչվող ուցուցիչը, ով պետք է կարևորի սովորողի սոցիալական դերերը՝ դարձնելով նրան համագործակցող-

շփվող էակ: Այստեղ հարկ է նշել 20-րդ դարի ամերիկացի գրող Կառլոս Կաստանեդայի ԳԻՏԵԼԻՔԻՆ ձգտող մարդու մասին խոսքերը. <<Գիտելիքին ձգտող մարդը իր ճանապարհին հանդիպում է 4 թշնամու.

> **1**-ին՝ վախը, որի վրա աշխատելով ձեռք ես բերում հաստատակամություն, բայց կուրորեն սկսում ես վստահել ինքդ քեզ: Այն դառնում է քո **2**-րդ թշնամին, ձեռք ես բերում անսահման ուժ, որը դառնում է քո **3**-րդ թշնամին, իսկ վերջինս, որն առաջանում է 3-րդ-ից, միանգամից չի առաջ գալիս, ժամանակ է պահանջում՝ **4**-րդը՝ ծերությունն է, որը գիտելիքի սերուցքն է՝ անընդհատ սովորել սովորելու մեջ>>:
>
> Փորձառնությունը անընդհատ կատարելու, սխալվելու, ճիշտը գտնելու և նորից փորձելու մեջ է, որը պահանջում է մի մեծ պարկ գիտելիք, մի մեծ զամբյուղ հմտություն և կարողություններ. դրա մասին խոսում է քո տարիքը: Իսկ այս ամենին մոտ կանգնելու համար անհրաժեշտ են շոշափելի, նյութական տեսլականներ. ուղիղ կապ բուհի(եր) հետ, քանզի ես պետք է շփվեմ, լսեմ, մասնակցեմ, առաջարկեմ, որպեսզի կարողանամ ճիշտ ընտրել:

Հետաքրքիր է հետևյալ պատմական ակնարկը, որոնք սոցիոլոգիական հետազոտության արդյունք են: Մարդու մասնագիտական պատկանելության գնահատման և մասնագիտական ընտրության կազմակերպման պատմության մասին մեզ տեղեկություններ են հասել դեռևս շատ վաղ ժամանակներից:

Աթենական դպրոց: Արիստոտել և Պլատոն: Այն երկու իմաստասեր մտածողները, ովքեր հիմք դրեցին առաջին տասներկուամյա դպրոցին: Այստեղ ուսուցանվում էր հիմնականում աստղագիտություն և մաթեմատիկա: Իսկ ո՞րն էր հիմնական տարբերությունը. աշակերտները սովորում էին առաջին երեք տարին միայն տառագրություն և թվադարան, այնուհետև հանգստանում էին երկու տարի: Երկրորդ եռտարում աղջիկները և տղաները սովորում էին

առանձին. Տղաները՝ ռազմական արվեստ, աղջիկները՝ տնայնավարություն: Եվս երկու տարի հանգստանալուց հետո ուսումն իրավունք ունեին շարունակելու միայն տղաները, ովքեր պետք է սովորեին տիրապետել բարձրակարգ ռազմական արվեստին: Ահա այստեղից էլ առաջ եկան մասնագիտությունների որակավորումն ըստ սեռերի:

Աթենական դպրոց

Աթենական դպրոցի հիմնադիրները՝ Արիստոտելը և Պլատոնը

Հիմնականում մասնագիտությանն առնչվող գիտելիքների, կարողությունների և ընդունակությունների որոշման միջոցով: Դա է վկայում մ.թ.ա. 3-րդ հազարամյակում հին Բաբելոնում գրագիրներ պատրաստող դպրոցներ ավարտողներն անցնում էին լուրջ փորձությունների միջով. Այդ պատճառով էլ գրագիրները լուրջ մասնագիտական պատրաստվածության շնորհիվ համարվում էին կենտրոնական կերպարներ: Նրանք կարողանում էին չափել տարածությունը, բաժանել ունեցվածքը, երգել, նվագել երաժշտական գործիքների վրա: Փորձությունների ժամանակ ստուգվում էր նրանց կտորեղենի, մետաղների, բույսերի տեսակների ճանաչողությունը,

հանրահաշվական գործողությունների իմացությունը և դրանց կիրառման կարողությունները:

Հին Բաբելոն



Բաբելոնացի իմաստասեր

Չինաստանում այդ նույն ժամանակներում տարածված էր կառավարական ծառայողի մասնագիտությունը և պաշտոնը: Ուստի այստեղ նույնպես գործում էր այդ պաշտոնի համար մասնագետի ընտրության հատուկ կարգ: Այս ընտրությունը մի յուրօրինակ տոնական արարողություն էր, որով կարծես ողջունում էին այդ պաշտոնին հավակնող և համարձակվող երիտասարդներին: Քննության այս <<նախատիպի>> թեմաները ընտրում էին իրենք՝ կայսրերը, որոնք իրենք

էլ անցկացնում էին գիտելիքների ստուգումը՝ բազմաստիճան մրցակցային ընտրության վերջնական փուլում:

Չինաստան

Հոնգվու կայսր

Այսօր մասնագիտական կողմնորոշումը ներառում է ոչ միայն մասնագիտական պիտանելիությունը, այլ նաև ներառում է մասնագիտական լուսավորումը, խորհրդատվությունը, սոցմասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական

դաստիարակությունը, որը ձևավորվել է շատ ավելի ուշ:

1908թ. Հունվարին Բոստոնում սկսեց իր աշխատանքը երիտասարդների մասնագիտական կողմնորոշման առաջին բյուրոն, որի գործունեությունն ուղղված էր օգնելու դեռահասներին՝ մասնագիտական ընտրության և աշխատանքային ուղին որոշելու հարցում:

Բոստոն

Նրա գործունեությունն էլ ընդունված է համարել մասնագիտական կողմնորոշման սկիզբ: Հետագայում նման բյուրո հաստատվեց Նյու-Յորքում, որի խնդիրներից էր տարբեր մասնագիտությունների կողմից մարդուն առաջադրվող պահանջների ուսումնասիրությունը:

Նյու Յորք

Այն իր գործունեությունը ծավալում էր ուցուցիչների հետ համագործակցության միջոցով, կիրառում տարբեր թեստեր, մեթոդներ: Նրանց փորձը լայն տարածում գտավ Միացյալ Նահանգներում, Իսպանիայում, Ֆինլանդիայում և այլուր:

2005թ.-ից Երևանում գործում է <<Երիտասարդների մասնագիտական կոմնորոշման կենտրոնը>> , որն իր գործունեությունը ծավալում է աշխատաշուկայի առանձնահատկություններից և պահանջներից:

[1; էջ 53]

Մասնագիտական կողմնորոշման հիմնական նպատակն է օգնել սովորողներին, որպեսզի նրանք դպրոցն ավարտելուց հետո (թե հիմնական, թե ավագ) կարողանան գիտակցաբար ընտրել այս կամ այն մասնագիտությունը՝ ելնելով իրենց հոգեկան, ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, աշխատաշուկայի պահանջներից և տվյալ մասնագիտության հասարակական նշանակությունից: Այն սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական միջոցառումների համակարգ է, որը նպատակ ունի հանրակրթական դպրոցի շրջանավարտին օգնելու գիտակցաբար ընտրել իրեն հարմար, համապատասխան մասնագիտություն: Մասնագիտական կողմնորոշման համակարգում անհրաժեշտ է ներառել հետևյալ բաղադրիչները.

1. Մասնագիտական լուսավորություն, որը հանրակրթական դպրոցում ուսումնառության տարիներին աշակերտներին նպատակասլաց ձևով տվյալ տնտեսական միջավայրում տեղեկությունների հաղորդումն է: Սկզբունքորեն մասնագիտական լուսավորության գործընթացին պետք է մասնակցեն բոլոր առարկայական ուցուցիչները և համապատասխան մասնագետներ: Այն ենթադրում է, որ յուրաքանչյուր առարկայի մասնագետ պարտավոր է իր առարկայի հետ առնչվող մասնագիտությունների վերաբերյալ աշակերտներին

հաղորդել տեղեկություններ, կազմակերպել էքսկուրսիաներ, ծանոթացնել նրանց այդ բնագավառի առաջատար փորձի և գործիչների հետ: Գործընթացին ներգրավել նաև ծնողներին: Հնարավորություն ստեղծել սովորողին աշակերտական սեղանի շուրջ նստելու փոխարեն ազատ մասնակցել ուսանողական սեղանների շուրջ կազմակերպվող քննարկումներին, դասերին, միջոցառումներին, պրակտիկաներին, նախագծերին: Սրանք պետք է պարբերական բնույթ կրեն:

2. Մասնագիտական դիագնոստիկան, որը նպատակ ունի պարզելու մարդու մասնագիտական պիտանելիությունը: Այդ պատճառով պետք է համագործակցեն տարբեր մասնագետներ՝ պարզելու համար տվյալ աշակերտի լավագույն, նշանակալի գործողությունների համակարգը, առողջական վիճակը, հետաքրքրությունները, մասնագիտական ընտրության դրդապատճառները, նաև հոգեկան և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են այս կամ այն բնույթի մասնագիտական արդյունավետ գործունեություն ծավալելու համար: Գաղտնիք չէ, որ կան որոշակի մասնագիտություններ, որոնք խիստ պահանջներ են ներկայացնում մարդուն: Օրինակ՝ օդաչուն, ջրասուզորդը և այլն:

3. Մասնագիտական խորհրդատվությունը նպատակային, կազմակերպված ծրագրերի համակարգ է: Տարբեր մասնագետներ, հանձինս բուհերում և աշխատաշուկայում պահանջարկ ներկայացնող մասնագետների, կարող են իրենց մասնագիտությունների վերաբերյալ կազմակերպել անհատական և խմբային խորհրդատվություններ, որպեսզի կարողանան օգնել սովորողներին:

4. Մասնագիտության ընտրությունը ամենից բարդն է այս համակարգում: Բանն այն է, որ դպրոցականները իրենց զարգացման տարբեր փուլերում հետաքրքրվում են տարաբնույթ մասնագիտություններով: Այս երևույթի պատճառները շատ տարբեր են/ ընտանեկան ավանդույթը, ընկերների խորհուրդները, մոդայիկ առաջարկներ/, ուստի լուծումներն էլ պահանջում են

անհատական մոտեցում: Այսօր կարևոր է նեղ մասնագիտությունների ընտրության անհրաժեշտությունը:

5. Մասնագիտական ադապտացիան (հարմարվողականություն) մարդու հարմարումն է իր ընտրած մասնագիտությանը, որը կատարվում է գործնականում, առանձնահատկություններին ծանոթանալու գործընթացում: Այս ընթացքում կողմնորոշվում է թե իր մեջ ինչպիսի մասնագիտական և մարդկային որակներ պետք է զարգացնի: Մասնագիտական խորհրդատվությունը չի ավարտվում դպրոցականների մեջ հետաքրքրությունների, հակումների, ընդունակությունների զարգացման աշխատանքներով: Այն դպրոցականի համար որոշակի անհատական ծրագիր է, որի հիման վրա և օգնությամբ նա պետք է պատրաստվի ընտրելու իր կյանքի ուղին: Այստեղ պահանջվում է պահպանել մի քանի կանոն: Դրանք են՝

1. Մանկավարժը երբեք չպետք է պարտադրի աշակերտին որևէ մասնագիտություն: Դա էթիկայի նորմ է:
2. Մասնագիտության սխալ ընտրությունը, վատ ընտրությունը հետագայում դաժանորեն վրեժխնդիր է լինում: Դրա համար էլ մանկվարժը չպետք է շտապի եզրակացություն կատարել աշակերտի մասնագիտական գործունեության վերաբերյալ: Այս հարցի կապակցությամբ աշակերտը վերջնական եզրակացությունը պետք է ինքնուրույն կայացնի: Իսկ ծնողը, հոգեբանը, ուսուցիչը և սոցիալական մանկավարժը պետք է միայն օգնեն:
   Սոցիոլոգիական հետազոտության արդյունքում մասնագիտական ընտրությունների խնդիրները լուծելիս առաջ է գալիս ութոտնուկ-փայտամածիկի կողմերը: Դրանք են՝
   1. Անձի մասնագիտական պլանները - ո՞ր մասնագիտությունն է ընտրել սովորողը:

2. Ծնողների կարծիքը մասնագիտության ընտրության հարցում – անհրաժեշտ է իմանալ ծնողի կարծիքը, սակայն պարտադիր չէ այն դարձնել հանձնարարական:
3. Ուսուցչի կարծիքը կամ դիրքորոշումը - մասնագետ-ուցուցիչները ընդունակ են որակյալ խորհուրդ տալ այս հարցում, քանի որ դպրոցականին դիտարկում են երկար տարիների ընթացքում և ազատ շփման, հաղորդակցման ժամանակ:
4. Դեռահասի տեղեկացված լինելը ընտրած մասնագիտության հարցում - մասնագիտության յուրահատկությունների և աշխատանքի պայմանների հարցում:
5. Սովորողի հակումները - դրա բացահայտումը անհրաժեշտ է, որպեսզի սովորողը օգնություն ստանա ճիշտ կողմնորոշվելու մասնագիտության հարցում:
6. Սովորողի ընդունակությունները - սրանք պարտադիր պետք է հաշվի առնվեն իբրև ապագա մասնագիտական գործունեությունների հաջողությունների պայման:
7. Հնարավորությունների մակարդակը - սա սովորողի ցանկությունների և հնարավորությունների համապատասխանությունն է, որոնք կարող են նաև չհամապատասխանել նրա զարգացման մակարդակին:
8. Մասնագիտության ընտրության հարցում մտերիմ ընկերների կարծիքը կամ դիրքորոշումը - սա ունի երկու կողմ: Առաջին՝ լավ ճանաչող ընկերը կարող է օգնել ընկերոջը ճիշտ կողմնորոշվելու: Մյուս կողմից անհրաժեշտ է ընկերոջը զգուշացնել չմոլորվելու հարցում, երբ սովորողը մասնագիտությունը ընտրում է՝ հանուն մտերիմ ընկերոջից չբաժանվելու: [2; էջ 122]



Այս խնդիրները հեշտացնում են մասնագիտություն ընտրելիս և ընդհանրապես աշխատանքային գործունեություն ծավալելիս, բայց պետք է հաշվի առնել նաև հետևյալ եզրակացություն- սկզբունքները՝

Ծայրահեղություն 1	Ոսկե միջին	Ծայրահեղություն2
Նեղ մասնագիտացում	Աշխատանքային մեթոդների և ձևերի բազմազանություն	Քառս, անհամակարգվածություն, մեթոդական մոդելների տառացի կրկնություն
Նախորդ փորձի իդեալականությունն	Ժառանգված մասնագիտության ընտրություն և ավանդույթների պահպանում	Նախորդների թորձի մերժում

Ներքին պասիվություն, սպասումային վիճակ, ինչ-որ մեկը քո խնդիրը կլուծի	Ինքնաակտիվացում, ներքին ռեսուրսների փնտրելու կարողություն	Ինքնաշահագործում, ամեն ինչ սեփական ուսերին վերցնելու ձգտում
Ինքնամեկուսացում	Մասնագիտական համագործակցություն	Մասնագիտական ինքնազգացողության կորուստ
Հուսահատություն, վատատեսություն	Հավատը հաջողության և սեփական հնարավորությունների ընտրության հարցում	Չափից ավելի ինքնավստահություն
Մասնակի սկզբունքների վրա կենտրոնացում, դրանց անջատական դիտարկում	Սկզբունքների փոխկապակցվածություն և փոխլրացում	Սկզբունքների առանձնահատկությունների կորուստ

[3;4 – էջ. 76, 128]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ իմաստասիրության սեփականությունն են դարձել իմաստասեր Դավիթ Անհաղթի մտքերը, ով եղել է հույն մեծ Պլատոնի հետևորդը: Մտորելով եզրակացրել է, որ Պայդեյայի կրթական համակարգի հիմքը սովորելու, հոգու խնամքի գաղափարն է, որը ուղիղ ձևով ազդում է անհատի մասնագիտական ինքնաձևավորման վրա: Ինքնակատարելագործումը մարդուն արմատապես դարձնում է առաքինի, քանի որ ինքը հասունանում է մասնագտություն ընտրելիս, մտորում, արժևորում է իր կատարելիք աշխատանքը, որի արդյունում կարողանում է ընտրել իր կյանքին իմաստ հաղորդող նմատակներն ու սկզբունքները:

<<Պայդեյա>> հասկացությունը նշանակում է կրտվածություն, կրթություն, գիտելի, ուսուցում՝ հիմքում նկատի ունենալով հունարեն <<պայս>> ՝ <<երեխա>> բառը: Կրթության ամեն մի համակարգ չի կարող կոչվել պայդեյա: Քանի որ այն ուրույն կրթական – մասնագիտական համակարգ է, որը պահանջում է ինքնախնամք, ինքնմշակում, ինքնակատարելագործում, որի համատեքստում կարևոր է ուսուցիչ-խորհրդատուի դերը:

Այս համակարգի գաղափարը ունի նաև բուն իմաստ. այսինքն՝ անձնավորության ներդաշնակ զարգացում, որի գագաթնակետը մասնագիտության որպես ապրելու արվեստի ձեռքբերումն է:

Հետևաբար, յուրաքանչյուր ոք պետք է հասկանա, որ ինքն է պատասխանատու իր ապրելիք կյանքի համար ու քանի որ ինքն է ընտրել իր մասնագիտական ուղին, ապա կկարողանա ձևավորել հետաքրքիր և ապրելու արժանի կյանք: Ուստի՝ պայդեյայի տրամաբանությունը հետևյալն է՝ ոչ ոք իրավունք չունի իր զարգացումը, ինքնակրթությունը թողնել: Ընդ որում՝ մասնագիտական կրթությունը պետք է ընկալե ոչ թե որպեսս պարտադրանք, այլ որպես մարդու հնարավորությունները մեծացնող շարժիչ ուժ, քանի որ մյուս բոլոր հանգամանքների նույնությունը հանգեցնում է նրան, որ, որքան կրթված է մարդը, այնքան ավելի մեծ հնարավորություններ ունի դիմակայել արտաքին

բացասական ազդակներին: Ու , երևի թե, դրա պատճառը պետք է փնտրել հասարակությունում նեղ մասնագիտական կրթություն ունեցողների պահանջարկի մեծացման մեջ: Իսկ իր մասնագիտական պահանջարկ ունենալ կամ չունենելաը մարդու համար, որպես կանոն դառնում է ինքնագնահատականի հիմք: Մարդկանց մեծ մասն ինքն իր մասին մտածում է՝ ելնելով իր մասնագիտական պահանջարկից: Ու արդի աշխարհում մարդու կյանքի որակի և ինքնագնահատականի կախվածությունը ստացած մասնագիտությունից ծնում է նոր խնդիրներ, ում մասնագիտությունը հասարակական զարգացումների արդյունքում սկսում է ցածր վարձատրվել՝ իր տեղը զիջելով նոր մասնագիտությունների:

Միշտ պետք է հիշել, որ լավ մասնագետ լինելու համար նախ և առաջ պետք է արժևորել այդ մասնագիտությանը բնորոշ կարևոր իրողությունները: Այլապես տիրապետելով գիտելիքների և ունենալով հմտություններ, սովորողը լավ մասնագետ չի դառնա, քանի որ կպակասի ամենակարևորը՝ արժեքայինը: Ամեն ոք գնում է իր ճանապարհով, բայց բոլոր ճանապարհները գնում են դեպի անհայտություն: Նշանակում է, ամբողջ իմաստը հենց ճանապարհի մեջ է, թե ինչպես գնալ նրանով: Եթե գնում ես հաճույքով ու սիրով, ապա այն քոնն է: Չկան լավ կամ վատ մասնագիտություններ, բայց կան լավ ու վատ մասնագետներ: Ինչ գործ էլ որ ընտրեք, ձգտեք հիմնովին տիրապետել դրան, քանի որ աշխատանքը հասուն մարդու կյանքում մեծ տեղ է գրավում, և հաջողությունները կամ անհաջողությունները աշխատանքում կարող են անդրադառնալ մարդու կյանքի մյուս կողմերի վրա: Մասնագիտության բոլոր տեսակները պետք են հասարակությանը, այլապես դրանք չէին լինի: Անկախ այն բանից, թե ինչ աշխատանք է, այն միշտ արժանի է հարգանքի: Սովորեք հարգել տանը կատարվող աշխատանքները, ու մասնակցել դրանց, որոնք թեպետ չեն վճարվում, սակայն ստեղծում են կարևորագույն և մեծ արժեք:

Միշտ հիշենք<< ճիշտ ընտրված մասնագիտությունը մարդուն ազատում է երեք գլխավոր չարիքներից՝ ձանձրույթից, արատից, կարիքից>>: Վոլտեր

Օգտագործված գրականության ցանկ

1. Մարդը և հասարակությունը ամսագիր – 2-3-2009

2. Մասնագիտական կողմնորոշման կազմակերպման մի քանի խնդիրներ հոդված – Լարիսա Թադևոսյան

3. Մարդը և հասարակությունը ամսագիր _ 5 _ 6 _ 2009

4. Փորձառու ուսուցիչների փորձը – հոդված – Ջենիֆեր Քերըլայն, Աբիգայլ Գուինն

5. Н. С. Пряжников "Методы активизации профессианального и личного самоопределения" - Москва - 2002 г.